ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/49

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Մասնակցությամբ՝
Երրորդ անձ՝ «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Սարգսյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Է.Ռ.Ա. Օիլ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 28.06.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է կայացնել բողոքը բավարարելու մասին որոշում՝ չեղյալ հայտարարել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար փայտե արկղերի

ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 28.06.2019թ. և 01.07.2019թ. կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 10.07.2019թ.-ին և 26.07.2019թ.ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 26.07.2019թ. և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 29.07.2019թ.:

2. <u>«Է.Ռ.Ա. Օիլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Է.Ռ.Ա. Օիլ» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար փայտե արկղերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ն (համատեղգործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.04.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 4-րդ կետի 4.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին առաջարկվել է ներկայացնելու որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը և առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.04.2019թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) կողմից ներկայացված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝

- 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը պարտավոր է հրավերով սահմանված կարգով և ժամկետում a.baghramyan@mil.am էլեկտրոնային փոստին ներկայացնել (ուղարկել) հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝

1) *իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված 6.1-ի.*

2) *հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը: Սակայն վերջինիս կողմից ներկայացվել է միայն Հավելված 6-ը և Հավելված 6.1-ը: Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել է Կոնսորցիումին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունը և շտկված տարբերակը ուղարկել a.baghramyan@mil.am էլեկտրոնային հասցեին:*

Նույն արձանագրությամբ Գնահատող հանձնաժողովը 07.05.2019թ. շարունակելով աշխատանքները արձանագրել է, որ սահմանված ժամկետում «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) ներկայացրեց որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի շտկված տարբերակները, որոնց հետազոտման արդյունքում պարզ դարձավ, որ մասնակիցը որպես նմանատիպ պայմանագիր ներկայացրել է տախտակի և գերանի (брус) մուտակարարման պայմանագրեր, ***ինչի հետ կապված սույն ընթացակարգի շրջանակներում նախքան հայտերի բացումը այլ մասնակցի կողմից ներկայացվել էր պարզաբանում կապված տախտակի մատակարարման վերաբերյալ ինչի կապակցությամբ գնահատող հանձնաժողովը արդեն իսկ ուներ հրապարակված պարզաբանում www.armeps.am համակարգով, համաձայն որի տախտակի մատակարարումը չի հանդիսանում նմանատիպ պայմանագիր:***

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն արձանագրել է, որ մասնակցից Կարգի 47-րդ կետի համաձայն արդեն իսկ պահանջվել էր որակավորման փաստաթղթերի շտկում, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ մասի պահանջները և հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, որոշեց «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ին (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) որակավորման հատկանիշները «Մասնագիտական

փորձառություն» չափորոշիչի մասով գնահատել ոչ համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին և մերժել վերջինիս հայտը:

«Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) ս.թ. մայիսի 16-ին բողոք է ներկայացրել ՀՀ ՊՆ գնահատող հանձնաժողովի որոշման դեմ, վիճարկելով նմանատիպության խնդրո առարկա դարձած ընկերության մերժման հիմքերը:

Նշված բողոքի վերաբերյալ որոշում է կայացվել ս.թ. հունիսի 14-ին, մասնավորապես ԳԲՔԱ-ՆԳ-2019/27 ծածկագրով որոշման համաձայն բողոքաբերի բողոքը բավարարվել է: Այսինքն սույն որոշմամբ մասնակցի հայտը մերժելու մասին հանձնաժողովի որոշումը դադարեցվել է այն հիմքով, որ կարելի է նաև այսպես արձանագրել, ***տախտակի մատակարարումը հանդիսանում է որպես նմանատիպ կատարված պայմանագիր:***

Ուրեմն այս դեպքում Ձեր ուշադրությունն եմ հրավիրում այն հանգամանքին, որ փաստացի ՀՀ ՊՆ վերը նշված ՌԱՖ-ՕՋԱԽ ՍՊԸ ի կողմից գնահատող հանձնաժողովին ուղղված պարզաբանման արդյունքում բազմաթիվ մասնակիցներ չեն կարողացել մասնակցել այս մրցույթին, զրկվել են մասնակցության իրավունքից, փաստացի հավասար մրցակցային պայմաններ չի ստեղծվել բոլոր հնարավոր մասնակիցների համար, այս մոտեցումը եղել է խտրական և ոչ համարժեք: Կարելի է ենթադրել, որ այս ամենը եղել է հատուկ կազմակերպված այսպես ասած դաշտը մաքրելու համար, որպեսզի այլ հնարավոր մասնակիցներ, որոնք կարող էին ավելի ցածր գին ներկայացնել չեն կարողացել մասնակցել միայն այն պատճառով, որ ՀՀ ՊՆ տվել է պարզանում որ տախտակների մատակարարված լինելը այս մրցույթի մասով չի կարող հանդիսանալ նմանատիպ:

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար փայտե արկղերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ: Մրցույթի հրավերի ՄԱՍ 1-ի 1.1 կետով սահմանվել է, որ գնման առարկա է հանդիսանում «պաշտպանության նախարարության կարիքների համար փայտե արկղերի ձեռքբերումը:

Ընթացակարգի հրավերի Մաս 1-ի 2-րդ կետի 2.5-րդ ենթակետով սահմանվել է, որ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր:

Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուսկարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

*Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում **<u>փայտե արկղերի և/կամ փայտյա այլ արտադրանքների մատակարարման պայմանագրերը:</u>***

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.:

*Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ սահմանված ժամկետում «Վիէյչ զրուպ» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) ներկայացրել է որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի շտկված տարբերակները, որոնց հետազոտման արդյունքում պարզ է դարձել, որ մասնակիցը **որպես նմանատիպ պայմանագիր ներկայացրել է տախտակի և գերանի (брус) մատակարարման պայմանագրեր,** ինչի հետ կապված սույն ընթացակարգի շրջանակներում նախքան հայտերի բացումը այլ մասնակցի կողմից ներկայացվել էր պարզաբանում կապված տախտակի մատակարարման վերաբերյալ ինչի կապակցությամբ գնահատող հանձնաժողովը արդեն իսկ ուներ հրապարակված պարզաբանում համակարգով,*

համաձայն ***որի տախտակի մատակարարումը չի հանդիսանում նմանատիպ պայմանագիր:*** *Ամփոփելով վերոգրյալը. Պատվիրատուն արձանագրել է, որ մասնակցից Կարգի 47-րդ կետի համաձայն արդեն իսկ պահանջվել էր որակավորման փաստաթղթերի շտկում, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ մասի պահանջները և հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, որոշեց «Վիէյչ զրուպ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) որակավորման հատկանիշները «Մասնագիտական փորձառություն» չափորոշիչի մասով գնահատել ոչ համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին և մերժել վերջինիս հայտը:*

Բողոք քննող անձը իր ԳԲՔԱ-ՆԳ-2019/27 որոշմամբ գտել է, որ Կոնսորցիումն, որպես հայտով ներկայացված մասնագիտական փորձառության չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացրել է «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի և «Օլիմպ Սիտի Ստրոյ» ՍՊԸ-ի միջև 03.04.2018թ. կնքված թիվ 010ԱՕ-18/03, «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի և «Սիրիուս» ՍՊԸ-ի միջև 01.08.2018թ. կնքված թիվ 012ԱՇ-18/07 պայմանագրերը, որոնց շրջանակներում «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել են շրջահատած չորսուներ և եզրահատած տախտակներ ***(обрезная доска, брус обрезной թարգմ.՝ համաձայն «ՌՈՒՍ-ՀԱՅ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ» ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ 1988թ.):***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 65-րդ կետը սահմանում է, որ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ ե առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է հօգուտ մասնակցի:

Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ Ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում փայտե արկղերի և/կամ ***փայտյա այլ արտադրանքների մատակարարման***

պայմանագրերը:

Այսպիսով, ամփոփելով վերը նշված փաստերը և համադրելով դրանք գործում առկա փաստաթղթերի հետ Բողոք քննող անձը գտել է, որ Կոնսորցիումի կողմից ներկայացված մատակարարման պայմանագրերով նախատեսված ապրանքատեսակները (շրջահատած չորսու և եզրահատած տախտակ) ըստ էության հանդիսանում են փայտյա այլ արտադրանք, ուստի սույն Ընթացակարգի իմաստով համարվում են նմանատիպ: Հետևաբար արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը սույն մասով անբավարար գնահատելով Կոնսորցիումի հայտը գործել է Օրենքի 34 րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 61 րդ կետով, Կարգի 65-րդ կետով, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի 2.5 կետով սահմանված պահանջների խախտմամբ, ուստի գտնում եմ, որ Ընկերության կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ամփոփելով վերոգրյալը ցանկանում ենք Բողոք քննող անձի ուշադրությանը հրավիրեմ այն հանգամանքին, որ այդ դեպքում երբ նշված որոշմամբ բողոքը բավարարվել է, այսինքն ՀՀ ՊՆ պարզաբանումը սստեղծել է արհեստական խոչընդոտներ մնացաց հնարավոր մասնակիցների համար, խախտվել է Գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված իրական նորմերը, քանի որ ինչպես արդեն նշել եմ, բավականին շատ կազմակերպություններ ունենալով տախտակի նմանատիպ պայմանագիր կարող էին շատ ավելի մատչելի գնով մասնակցեին այս ընթացակարգին և ճանաչվեին հաղթող մանակիցներ:»:

Վերոգրյալով պայմանավորված, «Է.Ռ.Ա. Օիլ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է հաշվի առնել Պատվիրատուի կողմից Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածների խախտումները, և ղեկավարվելով նույն Օրենքի 50-րդ հոդվածով սահմանված պահանջներով խնդրել է կայացնել բողոքը բավարարելու մասին որոշում՝ չեղյալ հայտարարել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար փայտե արկղերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 01.07.2019թ. գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ հնարավորություն տալով «Է.Ռ.Ա. Օիլ» ՍՊԸ-ի կողմից 28.06.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Ներկայացված դիրքորոշմամբ Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Փայտե արկղերի (152մմ Դ-20 կրակոցի արկղ)» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

03.04.2019թ-ին գնահատող հանձնաժողովը հաստատել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի և հայտարարության տեքստը, որը ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Այսուհետ՝ Կարգ) 34-րդ կետի 1-ին մասի համաձայն հրապարակվել է տեղեկագրում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 11.04.2019թ-ին ժամը 10:00-ին:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2-րդ կետի 2.5 ենթակետի 1) պարբերությամբ սահմանված է, որ սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում փայտե արկղերի և/կամ փայտյա այլ արտադրանքների մատակարարման պայմանագրերը: Քանի որ ընթացակարգի շրջանակներում ՀՀ ՊՆ կարիքների համար նախատեսվում է ձեռք բերել Փայտե արկղեր (152մմ Դ-20 կրակոցի արկղ), ուստի հրավերով նմանատիպ պայմանագրեր են սահմանվել փայտե արկղերի արտադրության և մասնակիցների շրջանակը հնարավորինս ընդլայնելու նպատակով սահմանվել է նաև փայտյա այլ արտադրանքների մատակարարման պայմանագրերը:

Հրավերի հրապարակումից հետո՝ 04.04.2019թ-ին «Ռաֆ Օջախ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է պարզաբանման հարցում՝ (կցվում է) թե արդյոք փախտակի մատակարարումը համարվում է նմանատիպ, ինչի կապակցությամբ հանձնաժողովի կողմից ներկայացվել է պարզաբանում (կցվում է), համաձայն որի փախտակի մատակարարման պայմանագրերը չեն դիտարկվում որպես նմանատիպ պայմանագրեր (քանի որ փախտակը հանդիսանում է հումք և ոչ թե փայտե արտադրանք) և «Գնումների մասին» ՀՀ օրենքի (Այսուհետ՝ Օրենք) 29-րդ հոդվածի համաձայն 05.04.2019թ-ին հրապարակվել է տեղեկագրում armeps.am համակարգի միջոցով:

23.04.2019թ-ին «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգի 1-ին չափաբաժնում 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) և վերջինիս armeps.am համակարգի միջոցով՝ ոչ ավտոմատ ծանուցմամբ (կցվում է), առաջարկվել է ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը և առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը:

«Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվեց որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի շտկված տարբերակները, որոնց գնահատման արդյունքում պարզ դարձավ, որ մասնակիցը որպես նմանատիպ պայմանագիր ներկայացրել է տախտակի և գերանի (брус) մատակարարման պայմանագրեր:

Քանի որ Կարգի 47-րդ կետի համաձայն մասնակցից արդեն իսկ պահանջվել էր որակավորման փաստաթղթերի շտկում, գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ մասի պահանջները՝ որոշեց «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները «Մասնագիտական փորձառություն» չափորոշիչի մասով գնահատել անհամապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին և մերժել վերջինիս հայտը:

«Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ն 16.05.2019թ-ին ներկայացրել է ԳԲՔԱ-ՆԳ-2019/27 ծածկագրով բողոք պահանջելով դադարեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի թիվ 5 արձանագրությամբ կայացրած «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու և «Յունիք Լայն» ՍՊԸ-ն առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու և որակավորման չափանիշներին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու գնահատող հանձնաժողովի որոշումները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 14.06.2019թ-ին կայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/27 ծածկագրով որոշմամբ բավարարեց «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը: Գնահատող հանձնաժողովը 25.06.2019թ-ին հիմք ընդունելով վերը նշված իրավապարտադիր որոշումը դադարեցրեց թիվ 5 արձանագրությամբ կայացրած որոշումները:»:

4. <u>Երրորդ անձ՝ «Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձի որոշմամբ թիվ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 1-ին տեղ ճանաչված «Վիէյչ Գրուպ» ՍՊԸ-ն ներգրավվել է որպես երրորդ անձ (այսուհետ՝ Երրորդ անձ):

Ներկայացված դիքորոշմամբ Երրորդ անձը հայտնել է հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չեղյալ հայտարարելու մասին «Է.Ռ.Ա. Օիլ» ՍՊ ընկերության ներկայացրած բողոքն առարկում ենք ամբողջությամբ:

Ուսումնասիրելով «Է.Ռ.Ա. Օիլ» ՍՊ ընկերության բողոքը «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի վերաբերյալ, արձանագրում ենք, որ նրանով ներկայացված է ընթացակարգի եւ գնահատող հանձնաժողովի կայացրած որոշումների բովանդակությունը, այսինքն նոր փաստական հանգամանքներ չի ներկայացվել եւ կարծես բողոքը կրում է ձեւական բնույթ:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 5 արձանագրությամբ կայացրած որոշումն արդեն իսկ «Վիէյչ գրուպ» ՍՊ ընկերության կողմից 15.05.2019 թվականին բողոքարկվել է եւ ԳԲՔԱ-ՆԳ-2019/27 ծածկագրով ընթացակարգի քննության արդյունքում գնումների հետ կապված բողոք քննող անձը բավարարել է ներկայացված բողոքը:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 10-րդ մասի յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին մինչեւ բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

Ուսումնասիրելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայքը արձանագրում ենք, որ «Է.Ռ.Ա. Օիլ» ՍՊ ընկերության գործունեությունը

ժամանակավորապես դադարեցված է, իսկ նրա տնտեսական գործունեության տեսակը հանդիսանում է սննդամթերքի ոլորտը:

Այս փաստական իրողության պայմաններում «Է.Ռ.Ա. Օիլ» ՍՊ ընկերությունը բողոքով չի ներկայացրել, թե օրենքով սահմանված իր ո՞ր շահն է խախտվել կամ խախտված շահի պատկերացումն առաջացել է այն բանից հետո, երբ «Վիէչ գրուպ» ՍՊ ընկերության բողոքը բավարարվել է:

Ըստ էության բողոքով ներկայացվել են մասնավորապես այն դիրքորոշումը, որը ներկայացրել էր Պատվիրատուն ԳԲՔԱ-ՆԳ-2019/27 ծածկագրով բողոքի քննության ընթացքում, որի վերաբերյալ արդեն իսկ եզրահանգում եւ բողոքներ քննող անձի որոշումը իրավապարտադիր է այդ թվում նաեւ յուրաքանչյուր անձի համար ում ենթադրյալ շահը կարող է խախտվել:

Բողոքաբերը հայտնում է, որ ընթացակարգի շրջանակում ՌԱՖ-ՕՋԱԽ ՍՊ ընկերության կողմից ներկայացված հարցադրման վերաբերյալ պատվիրատուն արդեն իսկ ներկայացրել էր պարզաբանում, որի արդյունքում բազմաթիվ մասնակիցներ չեն կարողացել մասնակցել այդ մրցույթին, զրկվել են մասնակցության իրավունքից, փաստացի հավասար մրցակցային պայմաններ չի ստեղծվել, բոլոր հնարավոր մասնակիցների համար, այս մոտեցումը եղել է խտրական եւ ոչ համարժեք:

Ներկայացված տեսակետի հիմնավորման համար բողոքաբերը չի վկայակոչել որեւէ վերաբերելի փաստարկ, ինչումն է դրսեւորվել խտրական եւ ոչ համարժեք մոտեցումը:

Ինչ վերաբերում է, որ պարզաբանման պարագայում մասնակիցները չեն կարողացել դիմել, ապա հայտնում ենք, որ այդ պարզաբանմանը ծանոթ լինելով այնուամենայնիվ «Վիէյչ գրուպ» ՍՊ ընկերությունը (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերության հետ) հայտ է ներկայացրել, մասնակցել եւ զբաղեցրել է առաջին տեղ:

Ընկերությունը ընթացակարգի մասնակցության հայտ ներկայացնելիս գնահատել է, որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար եւ մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի եւ 6-րդ մասի համաձայն՝

5. Առաջին եւ հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) ***առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը եւ հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):***

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով գնանման հարցման ընթացակարգի հրավերի ուսումնասիրությունից հետո, անկախ պարզաբանման հանգամանքից, «Վիէյչ գրուպ» ՍՊ ընկերությունը (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊ ընկերության հետ) առաջնորդվելով վերոգրյալ նորմերով եւ ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի 526-Ն որոշման կարգավորումներով մասնակցության հայտ է ներկայացրել վիճարկվող ընթացակարգին:»:

5. <u>ԳԲՔԱ-LO-2019/49 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից փայտե արկղերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի շրջանակում, ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.04.2019թ. թիվ 4 արձանագրության համաձայն՝ 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել նշված ընկերությունը և վերջինիս ծանուցվել է ներկայացնելու ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

«Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացվել են թերի, մասնավորապես՝

- 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը պարտավոր է հրավերով սահմանված կարգով և ժամկետում a.baghramyan@mil.am էլեկտրոնային փոստին ներկայացնել (ուղարկել) հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝

1) իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի.

2) հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Վերջինիս կողմից ներկայացվել է միայն Հավելված 6-ը և Հավելված 6.1-ը:.

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.04.2019թ. թիվ 5 արձանագրությամբ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ն ներկայացրել է որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի շտկված տարբերակները, որոնց հետազոտման արդյունքում պարզ է դառել, որ մասնակիցը որպես նմանատիպ պայմանագիր ներկայացրել է տախտակի և գերանի (брус) մատակարարման պայմանագրեր:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ 07.05.2019թ.-ին շարունակելով աշխատանքները՝ որոշել է մերժել Ընկերության հայտը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.04.2019թ. թիվ 5 արձանագրության համաձայն՝ սույն ընթացակարգի շրջանակներում նախքան հայտերի բացումը այլ մասնակցի կողմից ներկայացվել է պարզաբանում, կապված տախտակի մատակարարման վերաբերյալ, և ինչի կապակցությամբ գնահատող հանձնաժողովը armeps.am համակարգով, արդեն իսկ, տվել է պարզաբանում, համաձայն որի՝ տախտակի մատակարարումը չի հանդիսանում նմանատիպ պայմանագիր:

Հրավերի հրապարակումից հետո՝ 04.04.2019թ-ին «Ռաֆ Օջախ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է պարզաբանման հարցում, թե արդյոք տախտակի մատակարարումը համարվում է նմանատիպ, ինչի կապակցությամբ հանձնաժողովի կողմից ներկայացվել է պարզաբանում, համաձայն որի՝ տախտակի մատակարարման պայմանագրերը չեն դիտարկվում որպես նմանատիպ պայմանագրեր (քանի որ տախտակը հանդիսանում է հումք և ոչ թե փայտե արտադրանք) և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն 05.04.2019թ-ին հրապարակվել է տեղեկագրում armeps.am համակարգի միջոցով:

«Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ն 16.05.2019թ-ին ներկայացրել է ԳԲՔԱ-ՆԳ-2019/27 ծածկագրով բողոք՝ պահանջելով դադարեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի թիվ 5 արձանագրությամբ կայացրած «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու և «Յունիք Լայն» ՍՊԸ-ն առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու և որակավորման չափանիշներին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու գնահատող հանձնաժողովի որոշումները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 14.06.2019թ-ին կայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/27 ծածկագրով որոշմամբ բավարարվել է «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը:

Գնահատող հանձնաժողովը 25.06.2019թ-ին, հիմք ընդունելով վերը նշված իրավապարտադիր որոշումը, դադարեցրել է թիվ 5 արձանագրությամբ կայացրած որոշումները:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Է.Ռ.Ա. Օիլ» ՍՊԸ-ի կողմից 28.06.2019թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է, ենթակա է ամբողջությամբ մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու

գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ

լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

Վերոնշյալ հոդվածի բովանդակությունից հստակ է, որ յուրաքանչյուր անձ, մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Ընդ որում, Օրենսդիրը յուրաքանչյուր անձի շրջանակը սպառում է անձանցով, որոնց շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած հանձանժողովի կամ պատվիրատուի գործողությունների (անգործության) արդյունքում: Իսկ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից փայտե արկղերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով ընթացակարգի շրջանակում, ի թիվս այլ մասնակիցների հայտ ներկայացրած «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության պայմանագրով «Արխանգելսկիյ լես» ՍՊԸ-ի հետ) 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից և ծանուցվել է ներկայացնելու Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.04.2019թ. թիվ 5 արձանագրությամբ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել է «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել իր կողմից սահմանված ժամկետում որակավորման

պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ 07.05.2019թ.-ին շարունակելով աշխատանքները՝ որոշել է մերժել «Վիէյչ գրուպ» ՍՊԸ հայտը, այն հիմնավորմամբ որ ներկայացված որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի շտկված տարբերակների հետազոտման արդյունքում պարզ է դարձել, որ վերջինս որպես նմանատիպ պայմանագիր ներկայացրել է տախտակի և գերանի (брус) մատակարարման պայմանագրեր:

Հրավերի հրապարակումից հետո՝ 04.04.2019թ-ին «Ռաֆ Օջախ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է պարզաբանման հարցում, թե արդյոք տախտակի մատակարարումը համարվում է նմանատիպ, ինչի կապակցությամբ հանձնաժողովի կողմից ներկայացվել է պարզաբանում, համաձայն որի՝ տախտակի մատակարարման պայմանագրերը չեն դիտարկվում որպես նմանատիպ պայմանագրեր (քանի որ տախտակը հանդիսանում է հումք և ոչ թե փայտե արտադրանք) և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն 05.04.2019թ-ին հրապարակվել է տեղեկագրում armeps.am համակարգի միջոցով:

«Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ն 16.05.2019թ-ին ներկայացրել է ԳԲՔԱ-ՆԳ-2019/27 ծածկագրով բողոք՝ պահանջելով դադարեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի թիվ 5 արձանագրությամբ կայացրած «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու և «Յունիք Լայն» ՍՊԸ-ն առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու և որակավորման չափանիշներին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու գնահատող հանձնաժողովի որոշումները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 14.06.2019թ-ին կայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/27 ծածկագրով որոշմամբ բավարարվել է «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը:

Գնահատող հանձնաժողովը 25.06.2019թ-ին, հիմք ընդունելով վերը նշված իրավապարտադիր որոշումը, դադարեցրել է թիվ 5 արձանագրությամբ կայացրած որոշումները:

Սույն գործով Ընկերությունը, օգտվելով իրեն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի դրույթերով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք:

Ընկերությունը, սակայն, Բողոքներ քննող անձին չի ներկայացրել ապացույց այն մասին, որ Հանձնաժողովի կողմից տրված պարզաբանումը խոչընդոտել է հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը:

Ընդ որում, այդպիսի հնարավորություն Ընկերությունը ունեցել է, թե բողոքը ներկայացնելու պահին, և թե բողոքի քննության ընթացքում՝ մինչև որոշման կայացման պահը:

Ավելին՝ Ընկերության կողմից, բողոքի քննության ընթացքում չներկայացվեց որևէ վերաբերելի ապացույց առ այն, որ իր կողմից ընթացակարգին մասնակցելու համար ներկայացվելու էին հենց տախտակի մատակարարման նմանատիպ պայմանագրեր, կամ որ Ընթացակարգին մասնակցելու դեպքում իր կողմից ներկայացվելու էր ավելի ցածր, տնտեսող գնային առաջարկ, քան առաջարկվել էր Երրորդ անձի կողմից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Է.Ռ.Ա. Օիլ» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքներն անհիմն են, իսկ Ընթացակարգի պահանջները չեն սահմանափակել հնարավոր մասնակիցների հավասար իրավունքները: Հատկապես այն դեպքում, երբ՝

ա) Ընկերության կողմից չի ներկայացվել ապացույց առ այն, որ վերջինիս կողմից ընթացակարգին մասնակցելու համար ներկայացվելու էին հենց տախտակի մատակարարման նմանատիպ պայմանագրեր, կամ որ Ընթացակարգին մասնակցելու դեպքում իր կողմից ներկայացվելու էր ավելի ցածր, տնտեսող գնային առաջարկ, քան առաջարկվել էր Երրորդ անձի կողմից:

բ) Ընկերությունն, իրավունք ունենալով մասնակցելու «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/27 բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը, գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի ներկայացրել համանման բողոք՝ ինքն իրեն զրկելով համանման (բողոքարկման հիմք ծառայած հանձնաժողովի նույն գործողությունների վերաբերյալ) բողոք ներկայացնելու իրավունքից:

Վերոշարադրյալներով պայմանավորված՝ հերքվում են Բողոքաբերի կողմից նշված հնարավոր մասնակիցների մրցակցության ոտնահարման և գնումների մասին օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման փաստերի առկայությունը, ինչը կարող էր հանգեցնել ընթացակարգի անվավեր ճանաչմանը:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Է.Ռ.Ա. Օիլ» ՍՊԸ-ի կողմից 28.06.2019թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/49 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**